



Ագդարաբլուրեան Trumpet's Sound **փող**

48-ԲԴ ՏԱՐԻ, ԱՄՍՏՐԱԼԻԱ
ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր քերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org

Բովանդակութիւն

Վստահութիւն..... 3

Հովիւ՝ Հրաչ Գույումեան

Արդեօ՞ք Աստուած իսկապէս բարի է. 4

Ռէքս Տիրլալ

Ի՞նչ բան մղեց Յիսուսը խաչը ելլելու. 7

Հովիւ՝ Հասկիպ Այաճաճի

Յովհաննէս Մկրտչի ծնունդը..... 9

Տոն Սրորմըր

Կը հաւատո՞ք Յիսուսին..... 12

Հովիւ՝ Բաֆֆի Զափարեան

Աւետարանը հասցնել
կարիքաւորներուն 15

«ԱՄՄ» յանձնախումբ

Կազմի նկարը՝ հայկական բնաշխարհ, ԱՄՄ
միախումբական խումբ 2015թ.



Աղօթքի եւ փառաբանութեան Նիւթեր

- Աստուծոյ փառք կուտանք Իր գործերու համար ԱՄՄ-ի եւ ՄԱԸ-ի միջոցով:
- Շարունակեցէ՛ք աղօթել Հայաստանի մանուկներուն ու պատանիներուն համար:
- Աղօթեցէ՛ք Հոկտեմբերին Աւստրալիայէն Հայաստան մեկնող միսիոնարական խումբին համար:
- Աղօթեցէ՛ք ուղղեբեռի ծառայութեան համար, որ Տէրը պահեստ մը տրամադրէ մեզ Սիտնիի մէջ:
- Ձեր համագործակցութեամբ եւ ֆինանսական աջակցութեամբ կարող ենք Աւետարանը հասցնել կարիքաւոր ընտանիքներուն եւ թեթեւցնել անոնց հոգսերը:
- Եթէ կը փափաքիք կանոնաւոր կերպով ստանալ մեր աղօթքի նամակը, ապա մեզ հետ կապ հաստատեցէ՛ք հետեւեալ հասցեով. info@acmaust.org:

Վստահութիւն

«Ահա քեզի կը պատուիրենմ, զօրացի՛ր ու քաջասի՛րտ եղիր, մի՛ վախնար ու մի՛ զարհուրիր. վասնզի քու Տէր Աստուածդ քեզի հետ պիտի ըլլայ, ուր որ երթաս» (Յեսուայ 1:9):

Շատ կարեւոր հարց է, թէ որո՞ւ կը վստահինք:

Այսօրուայ աշխարհին մէջ ուրիշին վստահիլը բաւականին դժուար է: Մարդիկ հրաժարած են որեւէ մէկու վստահիլ՝ նոյնիսկ ընտանիքի անդամներուն:

Ոմանք միայն իրենց իմաստութեանն ու զօրութեանը կը վստահին, սակայն Աստուածաշունչը շատ յստակ կ'ըսէ. «Իր սրտին ապաւինողը անմիտ է, բայց իմաստութեամբ քալողը պիտի ազատի» (Առակաց 28:26):

Կեանքը երբեմն ծանր եւ վախնալիք կրնայ դառնալ: Որքա՛ն խեղճ մարդիկ պիտի ըլլայինք, եթէ Տէր Յիսուսի հանդէպ հաւատք եւ վստահութիւն չունենայինք:

Բնական աղէտներ, պատերազմներ, վախեր, վստահութեան պակաս, ֆինանսական ճգնաժամեր, ընտանեկան քայքայուած փոխարարեւորութիւններ, չքաւորութիւն, անտոնութիւն, սիրելիի մը կորուստ, եւ ցանկը շատ երկար է: Թոյլ տուր քեզի հարց մը ուղղել. «Նեղութեան ժամանակ որո՞ւ կը դիմես, որո՞ւ կը վստահիս, ոգելից խմիչքի՞ն, թմրանիւթի՞ն, թէ՞ պարզապէս կը յանձնուիս եւ հեռու կը փախչիս»:

Իսկ Յիսուսը փորձած կա՞ւ:

Կեանքիս մէջ բազմատեսակ իրավիճակներով անցայ, պահեր եղան կարծես թէ անհնարին էր առանց վնասներու դուրս գալ, անհնարին էր դարձնալ ազատութեան մէջ գտնուիլ, ուրախութիւն ունենալ, սակայն Տէրը հաւատարիմ է Իր բոլոր զաւակներուն նկատմամբ, ուստի դուն ալ վստահե՛ Իրեն, ամուր կառչի՛ր Անոր, երբեք մի՛ ձգեր որ հեռանայ քեզմէ, յոյսդ մի՛ կորսնցներ, քանի որ Ան հաւատարիմ Հայր է:

«Այն ատեն թագաւորը շատ ուրախացաւ ու հրամայեց որ Դ-անիւլը

գուրբէն հանեն: Դ-անիէլը գուրբէն հանեցին ու անոր վրայ որեւէ վնաս չտեսնուեցաւ, վասն զի իր Աստուծոյն հաւատաց» (Դ-ան. 6:23):

Այո՛, ես անցած եմ այնպիսի պարագաներէ, ուր յոյսի նշոյլն անգամ չկար, սակայն Աստուած Իր ձեռքերը երկարեց եւ զիս փրկեց: Ես այսօր զինք կը փառաբանեմ: Յիսուս մեր միակ յոյսն է, Ան է այն միակը որ օգնութեան կը հասնի, երբ զինք կը խնդրենք: Ես այս խօսքերը կը գրեմ սրտիս մէջ ուրախութիւն ունենալով, քանի որ իմ Փրկիչս կենդանի է: Ես կորսուած էի, առանց որեւէ յոյսի, սակայն Ան իմ սուգս պարի վերածեց:

«Արդ՝ յուսոյ Աստուածը ձեզ լեցնէ կատարեալ ուրախութիւնով ու խաղաղութիւնով՝ ձեր հաւատքին համաձայն, որպէս զի ձեր յոյսը առատանայ Սուրբ Հոգիին զօրութիւնովը» (Հռովմ. 15:13):

Վատահէ՛ Յիսուսին անկախ քու պարագաներէդ, եւ երբեք ամօթով պիտի չմնաս:

Հ. Գ.

Արդեօ՞ք Աստուած իսկապէս բարի է

Արդեօք հիանալի զգացում մը չէ՞ այն զգացումը, երբ կեանքիդ մէջ բան մը ընթանայ ճիշդ այնպէս ինչպէս նախատեսած էիր (նոյն-իսկ եթէ երկար չտեսէ): Երբ մեր զաւակները քննութիւններու մէջ կը յաջողին կամ իրենց երազած գործին կ'անցնին, երբ ընտանեկան ու եկեղեցական կեանքը խոստումնալից է եւ առողջական որեւէ խնդիր չունինք, կարծես թէ երջանկութենէն ու երախտագիտութենէն մեր դէմքը կը սկսի փայլիլ: Մեր ծանօթներուն կ'ըսենք. «Տեսա՞ք որ Աստուած բարի է»: Երբ Աստուած մեր կողմէն է եւ գործունեայ կերպով Իր մասնակցութիւնը կ'ունենայ մեր առօրեայ կեանքին մէջ, մեզ համար Իրեն շնորհակալութիւն յայտնելը ամէնեւ ինչ դժուար բան չի թուար: Այնուամենայնիւ եղած են պահեր, երբ սկսած եմ մտածել թէ ի՞նչ նկատի ունինք, երբ կ'ըսենք թէ Աստուած բարի է: Պատկերացուցէք քրիստոնէայ վարորդի մը, ով հազիւ թէ խուսափեցաւ մայրուղիի վրայ ճանապարհային լուրջ

պատահարէ մը: Այսպիսի պարագային, իհարկէ կ'ըսենք թէ Աստուած բարի գտնուեցաւ իր հանդէպ: Եթէ զաւակներու քննութիւնները անցնիլը կամ ճանապարհորդութեան ժամանակ ապահով ըլլալը եւ առողջական խնդիրներ չունենալը ապացոյցներ են, որ Աստուած բարի է, ապա Աստուծոյ մասին ինչպիսի՞ կարծիք պիտի ունենայինք, եթէ զաւակներս քննութիւններուն մէջ ձախողէին, կամ եթէ ճանապարհային պատահարի հանդիպէի կամ առողջութեանս հետ խնդիր ունենայի. արդեօ՞ք ասոնք ապացոյցներ են, որ Աստուած բարի չէ: Կը խորհիմք թէ մարդկանց մեծամասնութիւնը այդպէս պիտի մտածէր: Կեանքիս վրայ ակնարկ մը նետելով կը յիշեմ թէ եղած են պահեր, երբ ջերմութեամբ աղօթած էի հարցի մը համար, որ կը կարծէի թէ բարի եւ կարեւոր է ինծի համար, բայց այդպէս ալ անպատասխան մնաց: Այդպիսի խաւար պահերուն մէջ սարսափելի բան է եզրահանգման գալ, որ Աստուած իրականութեան մէջ այդքան ալ բարի չէ:

Մենք բոլորս բնածին հակուածութիւն ունինք մեր կեանքի փորձէն Աստուծոյ մասին կարծիքներ կազմելու: Երբ կեանքը մեզի կը ժպտայ, կ'ըսենք թէ Աստուած բարի է, երբ ամէն ինչ մեզի հակառակ կ'ըլլայ, կ'ըսենք թէ Ան այնքան ալ բարի չէ: Այն անձը, ով կ'ըսէ թէ Աստուած բարի է, քանի որ կեանքին մէջ լաւ բաներու հանդիպեցաւ, իր փորձառութիւններուն լոյսի ներքոյ Աստուծոյ ինչպիսին ըլլալու մասին կարծիք կազմելու վտանգի առջեւ կանգնած է: Երբ ողբերգութեան մը պատահի, ան կամ ստիպուած պիտի եզրակացնէ, որ Աստուած բարի չէ, կամ ալ իր կեանքին մէջ այնպիսի անկիւնադարձ մը պիտի ունենայ, ուր պիտի տորվի թէ իրականութեան մէջ Աստուած ինչպիսին է:

Կեանքի նկատմամբ այս ոչ աստուածաշնչային մօտեցումի խնդիրն այն է, որ Աստուծոյն կը ներկայացնէ որպէս փոփոխական անձ, որու քայլերը ենթակայ են փոփոխութեան ըստ մեր ապրած կեանքի իրավիճակներու եւ ձեռք բերած փորձառութեան: Ան կարծես թէ բարի է, երբ կեանքը լաւ է, եւ ոչ բարի, երբ կեանքը վատ է: Ո՞վ կ'ուզէ այսպիսի Աստուած մը ունենալ: Մենք կարիք ունինք այնպիսի Աստուծոյ մը ով անփոփոխ է, անկախ թէ տուեալ ժամանակի մէջ կեանքի ինչպիսի իրավիճակներով կ'անցնինք կամ ինչպիսի փորձառութիւններ ձեռք կը բերենք:

Թերեւս դժուար կը թուայ հաւատալիքներուդ վրայ հաստատ մնա-

լը, երբ կեանքը չուզած ձեռովդ կ'ընթանայ, սակայն աւելի դժուար է հետեւիլ այնպիսի Աստուծոյ մը որու որոշումները պայմանավորուած են կեանքին մէջ մեր վերապրած փորձառութիւններէն:

Փոխանակ մեր փորձառութիւններուն հիմնուելով Աստուծոյ մասին գաղափարներ կազմելու, Աստուած մեզի կը հրաւիրէ, որ մեր փորձառութիւններուն մէջ սորվինք Իրեն յենուիլ, եւ այդ ժամանակ պիտի բացայայտենք այն ինչ մեզ համար անհասկանալի էր ու պիտի տեսնենք թէ Ան մեր պատկերացուցածէն աւելի բարի է:

Մինչ Յորը չարչարանքերու մէջ էր սորվեցաւ թէ կեանքին մէջ իրեն ինչ ալ պատահելու ըլլար Աստուած բարի էր եւ արժանի երկրպագութեան: Առաջին հարուածի ժամանակ կարծես թէ այսպիսի արտայայտութիւն մը ընելը չարչարուող անձի մը կողմէ անսովոր բան մը ըլլար: Սակայն ասոր մէջ է բժշկութիւնը: Յոբի վերականգնուելու առաջին քայլը կը կայանար այն բանի մէջ, որ Յոբ հասկնար թէ Աստուած միշտ բարի է եւ արժանի երկրպագութեան: Նոյնը նաեւ կարելի է ըսել մեզ համար: Աստուծոյն Իր բարութեան համար երկրպագելը պէտք է ըլլայ այն հզոր զէնքը, որը պէտք է օգտագործենք կեանքի ելեւէջներու ժամանակ: Այն մեզ կը պաշտպանէ թէ չար օրերու եւ թէ լաւ օրերու մէջ: Լաւ օրերու ժամանակ Աստուծոյն Իր բարութեանը համար երկրպագելը մեզ կը խոնարհեցնէ եւ ամէն բանէ եւ անձէ առաւել Իրմէ կախեալ ըլլալ կը սորվեցնէ:

Չար օրերու ժամանակ Աստուծոյն երկրպագելը մեզմէ ցաւը չի հեռացներ, հապա մեր ուրքերուն համար ապահով գետին մը կը ստեղծէ, որտեղ մենք պաշտպանուած կը զգանք ու աւելի իմաստութեամբ կը կարողանանք անցնել կեանքի այդ խրթին իրավիճակները:

Անսասան եղի՛ր, Աստուած միշտ բարի է:

Քաղուած՝ Ռէքս Տիրլալի
«Աստուած միշտ բարի է» գրքէն



Ի՞նչ բան մղեց Յիսուսը խաչը ելլելու Ա Պետրոս 2:21-25

Տարիներ առաջ կրօնական միջյարանուանական ժողովի մը ընթացքին հարց ծագեցաւ թէ ո՞վ խաչեց Յիսուսը: Երկար վիճաբանութիւններէ ետք ըսուեցաւ թէ ո՛չ հրեաները, ո՛չ Պիղատոսը, ո՛չ ալ ներկայ հռովմէացիներն էին, այլ՝ այն ատենուայ հռովմէական կայսրութիւնն էր որ ներկայիս գոյութիւն չունի: Յանգամաքը գոյութիւն չունեցող մէկու մը վրայ դրուեցաւ, որպէսզի ոչ մէկը պատասխանատու սեպուէր: Սակայն զարմանալին հոն է որ կրօնականներէն ոչ մէկը անդրադարձաւ որ Յիսուսը խաչը հանողը՝ ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ, մեր մեղքերն էին: Յիսուս կարողութիւն ունէր խաչը ելլելու կամ չ'ելլելու, սակայն ի՞նչ բան ստիպեց զինք որ խաչուի: Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, որ առաջին պատճառը մեր մեղքերն էին: Ադամէն սկսեալ, մեղքը մարդը Աստուծմէ բաժնեց, բարեկամին դէմ թշնամի դարձուց, մեր շրթունքներէն փառաբանութիւնը վերցուց, մեզ անասունի աստիճանի ցածցուց, ընտանիքներ քայքայեց եւ զանոնք իրարմէ բաժնեց: Յաւալին հոն է, որ այս օրերուս մեղք գործելը ծածուկ բան մը չէ այլեւս, մեղքը ալ մեղք չի սեպուիր, շատ թեթեւօրէն կ'առնեն զայն, նոյնիսկ կը հպարտանան զայն գործելով: Միթէ այս բոլորը չէ՞ր, որ մեր Տէրը խաչը հանեց: Աստուծոյ Խօսքին մէջ կը կարդանք, որ Տէր Յիսուս աշխարհի սկիզբէն առաջ արդէն Աստուծոյ մոռթուած գառնուկն էր: Այնչափ կորսուեցանք ու թաղուեցանք մեղքի մէջ, որ Աստուած Իր ամենագիտութեանը մէջ, միակ դարմանը, միակ լուծումը պատրաստած էր մեզի:

Վերջերս հեռատեսիլի վրայ շանթահարիչ յայտագիրի մը ականատես եղայ - դիւային կերպարանքով անձիք կը հարցաքննուէին թէ ինչո՞ւ մարդկային արիւն խմելը դարձուցած էին իրենց պաշտամունքը: Անոնցմէ մին կը պատասխանէ թէ արիւնը աշխարհի վրայ ամենահին յիշուած բաներէն մին է, թէ նոյնիսկ Աստուածաշունչը կը խօսի արիւնի կարեւորութեան մասին, թէ առանց արիւնի կեանք չկայ: Սատանայապաշտներն իսկ կը խօսին արիւնի մասին: Աստուծոյ Խօսքը կ'ըսէ թէ առանց արեան քաւութիւն չկայ, սակայն անիկա որո՞ւ արիւնն է, մարդո՞ւ, նոխազներո՞ւ, ո՛չ, հապա Անոր Որդոյն Յիսուս Քրիստոսի ար-

իւնը: Եթէ Յիսուս Իր արիւնը չթափէր, մեր մեղքերուն դարման պիտի չ'ըլլար, մեղքերէ ազատութեան ուրիշ միջոց, ուրիշ կերպ չկայ:

Ոչ թէ միայն Յիսուսը խաչը հանողը մեր մեղքերն էին, հապա Անոր մեզի հանդէպ ունեցած սէրն էր: Աստուած այնպէս սիրեց մեզ որ Իր Որդին տուաւ: Եթէ մէկը սիրես, կուտաս, եւ որչափ շատ սիրես այն անձը, այնքան ատելի կուտաս, եւ որչափ ալ ըրած գոհողութիւնդ մեծ ըլլայ, այդ գոհողութիւնը աչքիդ չ'երեւնար:

Տարիներ առաջ Պէյրութի մէջ ամերիկացի գոյգի մը հանդիպեցայ: Երիտասարդը պատմեց թէ ինչ մեծ գոհողութիւններով ջանացած էր ադամանդէ մատանի մը առնել իր նշանածին: Այս երիտասարդը կ'ապրէր շատ ցուրտ ձմեռ ունեցող նահանգի մը մէջ, եւ տակաւին ուսանող ըլլալով պէտք էր աշխատէր որ թէ ընտանիքին օգտակար ըլլար եւ թէ դպրոցականին հասներ: Իր նշանածը այնքան կը սիրէր, որ կ'որոշէ ի գին ամէն գոհողութեան իր որոշած ադամանդէ մատանին գնել: Երկար հաշիւներէ ետք, կ'անդրադառնայ որ միակ կերպը այդ գումարը գոյացնելու իր երթելէի ծախսէն կտրելն էր եւ այդ կը նշանակէր ամէն օր այդ ցուրտին 3 ժամ քալել դպրոց եւ գործի երթալու համար: Ամիսներ ետք երբ կ'իրականանայ իր փափաքը, նշանածը մեծ զարմանքով եւ հիացումով իրականութիւնը կը գիտնայ: Ինչպիսի՞ սէր, ի՞նչ մեծ գոհողութիւն: Տէրը մեզ այս սիրոյն հազարապատիկը սիրեց եւ տուաւ ոչ թէ մատանիի մը դրամը, այլ Իր կեանքը:

Այսօր եթէ մէկը մեզի նուէր մը բերաւ կամ ճաշի մը հրաւիրեց, կը փոխադարձենք ազնուութեամբ, որովհետեւ պարտական կը զգանք: Տէրը մեզի համար մեռաւ, արդեօք պատրաստ ենք փոխադարձելու Իր սէրը: Այս օրերուս մենք Տէրոջ համար մեռնելու ստիպում չենք, որովհետեւ հալածանքի ենթակայ չենք, բայց մէկ բան կայ որ պէտք է ընենք, Տէրոջը համար ապրելու ենք: Կրնա՞նք զինք այնչափ սիրել որ Իրեն համար ապրինք: Քրիստոս խաչը ելաւ որովհետեւ մեղաւոր էինք, որովհետեւ Ան մեզ սիրեց, եւ այդ՝ Աստուծոյ կամքն էր: Աստուած հաճեցաւ զայն խաչի մահուան մատնելու որովհետեւ միակ լուծումը այն էր, որ պէտք էր մէկը ըլլար որ թէ Աստուծոյ հաճելի ըլլար եւ թէ մարդոց մօտ, եւ Յիսուս որ Աստուած էր, մարդացաւ: Կընդունի՞ս այս Փրկչին այսօր, Ան քեզ կը սպասէ, որ դարձի գաս ու ապաշխարես:

Հովիւ՝ Հապիպ Ալաճաճի

Յովհաննէս Մկրտչի ծնունդը

Ղուկաս 1:57-82

Թէւ Չաքարիան չհաւատաց հրեշտակի պատգամին, սակայն Աստուած պատուեց Իր խոստումը, եւ Յովհաննէսը ծնաւ: Դրացիներն ու հարազատները հաւաքուած էին երեխայի թլփատութեան միջոցառմանը եւ կը նախատեսէին զինք իր հոր անունով կոչել: Եղիսաբէթը, իմանալով հրեշտակի ըսածը, յայտարարեց որ անոր անունը Յովհաննէս է: Այստեղ կը տեսնենք Եղիսաբէթի հաստատականութիւնն ու խիզախութիւնը, չնայած որ դրացիներն ու ազգականները այլ բան կը խորհէին:

Չաքարիան, համը դառնալով մէկտեղ գոցէ մաւի խուլ ալ դարձած էր: Մարդիկ ստիպուած էին իր հետ նշաններով խօսիլ, որպէսզի իմանային, թէ ինչ կուգէր իր որդիին անուանել: Ան անոնց պատասխանեց՝ տախտակի մը վրայ գրելով Յովհաննէս անունը: Իր խօսելու ունակութիւնը այնուհետեւ վերականգնեցաւ այնպէս, ինչպէս հրեշտակը խոստացած էր:

Չարմանալի է, թէ այսպիսի իրադարձութիւն մը որքան արագ մոռցուեցաւ: Մարդիկ յստակ տեսած էին Աստուծոյ ձեռքը այս պատմութեան մէջ եւ իրենց սրտերուն մէջ երկար պահած էին կատարուածի յիշողութիւնը: Այնուամենայնիւ, կը թուայ թէ լուրերը շատ հեռու չգացին: Երեսուն տարի անց Յովհաննէս Մկրտիչը յայտնուեցաւ մարդկանց, սակայն կրօնական իշխանութիւնները հազար ու մէկ հարց կուտային՝ պարզելու, թէ ով էր ան:

Չաքարիայի մարտիրոսները

Պատմութիւնը լաւ աւարտ ունեցաւ: Չաքարիայի հաւատքը հաւանաբար արագ վերականգնուեցաւ: Իր դժուարութիւնը ժամանակաւոր բնոյթ ունէր: Երբ համը դարձաւ, իսկոյն գիտակցեցաւ, որ խօսող հրեշտակը Աստուծմէ էր: Սակայն յաջորդ ինը ամիսներու ընթացքին ան չկրցաւ Աստուծոյ մեծութեան հանդէպ իր ունեցած հաւատքը արտայայտել խօսքերով: Երբ իր որդին ծնաւ, ու անոր անունը Յովհաննէս դրաւ, այդ ժամանակ իր լեզուն բացուեցաւ եւ սկսաւ Աստուծոյն գովա-

բանել եւ մարգարեանալ այն խօսքերով, որոնք ցոյց կուտան, որ ինք իրացրած էր Աստուծոյ նպատակները: Ան հասկցաւ, որ դարեր առաջ խոստացուած Մեսիան պիտի գար, եւ որ Յովհաննէսը Անոր ճամբան պատրաստողը պիտի ըլլար: Ան խօսեցաւ Աստուծոյ մասին, ով Դաւիթի տունէն փրկութեան եղջիր մը պիտի բարձրացնէր: Ան համոզուած էր, որ իր որդին որոշակի դէր պիտի ունենար, եւ գիտէր, որ փրկութիւնը Աստուծմէ է:

Զաքարիայի մարգարէութիւնն ու գովասանքի խօսքերը կարելի է բաժնել երկու մասի: Զաքարիան առաջինը խօսեցաւ եկող Մեսիայի մասին, այնուհետեւ իր որդիի կատարելիք դերի մասին: Ան գովաբանեց Աստուծոյն Իր խոստումներու կատարման համար. Աստուած այցելած ու փրկած էր Իր ժողովուրդին:

Փրկութիւնը Աստուծոյ ծառայ Դաւիթի տունէն պիտի գայ: Երեմեայ 23:5-ը կ'ըսէ. «Ահա օրեր կու գան, կ'ըսէ Տէրը, երբ Դաւիթէն արդարութեան Շառափղ մը պիտի հանեմ, որ թագաւորի պէս թագաւորութիւն պիտի ընէ, իմաստութեամբ պիտի վարուի ու երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն պիտի ընէ»: Զաքարիան գովաբանեց Աստուծոյ Իր փրկութեան եւ Մեսիային ուղարկելու համար, ով ներում եւ խաղաղութիւն բերաւ:

Զաքարիան տեսաւ իր որդին՝ որպէս Տէրոջ նախակարապետը: Այն մարդը, ով հարցականի տակ դրաւ հրեշտակի պատգամը, այժմ վստահօրէն կը հաւատայ Աստուծոյ, ով Յովհաննէսին առաջադրանք պիտի տար եւ պիտի օգնէր զինք այն իրականցնելու մէջ: Ան Իսրայէլի ժողովուրդին հոգեւորապէս պիտի պատրաստէր գալիք Մեսիային դիմաւորելու համար: Ան այդ պիտի ընէր՝ ժողովուրդին տալով փրկութեան գիտութիւնը իրենց մեղքերու թողութիւնով:

Չնայած Զաքարիան վստահ էր աստուածային այս ծրագրին մէջ իր որդիի կատարելիք դերի մասին, սակայն հաւանական է, որ ո՛չ ինք, ո՛չ ալ Եղիսաբէթը այդքան երկար չապրեցան, որ կարողանային տեսնել իրենց որդիի ծառայութեան մեկնարկը: Այդ ծառայութիւնը սկսաւ Յովհաննէսի հոգեւորապէս ուժեղանալու եւ Իսրայէլի անապատներուն մէջ որոշ ժամանակով մեկուսանալէն յետոյ:

Մեզ համար այսօր

Այս պատմությունը կը կարեւորէ հաւատքի կեանքի որոշակի կողմերը, որոնք նոյնպէս կարեւոր են բոլորիս համար:

1. Մենք չենք կրնար ենթադրել, որ մեր հաւատքը բաւականաչափ ուժեղ է դժուար իրավիճակները դիմագրաւելու համար: Եթէ Չաքարիայի նման աստուածավախ մարդը ձախողեցաւ, ապա որքան աւելի մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք ինքներս մեզ, որ չըլլայ թէ սայթաքինք:
2. Մենք կրնանք երախտապարտ ըլլալ, որ ժամանակաւոր անհատութիւնը չի խափանէր Աստուծոյ խոստումները: Երբ կասկածանքի ժամանակներով կ'անցնինք, պէտք է այդ կասկածները Տէրոջը մօտ բերենք եւ Իրմէ օգնութիւն խնդրենք, որպէսզի մեզ օգնէ՝ տեսնելու այդ դժուարութիւններու նպատակները մեր կեանքին մէջ:
3. Ամենայն հաւանականութեամբ, մեր հաւատքի պակասը կամ անհաւատութիւնը կրնայ հանգեցնել որոշ պատիժներու կամ գուցէ օրհնութեան պակասի: Մենք պէտք չէ անհաւատութեանը թեթեւամտօրէն վերաբերինք: Բայց շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ, որ Իր խոստացած օրհնութիւնները, ինչպիսիք են յաւիտենական կեանքն ու Սուրբ Հոգիի ներքնակութիւնը, մեզմէ երբեք պիտի չվերցուն:
4. Մենք պէտք է յարատեւենք աղօթքի մէջ: Երբեմն մեր աղօթքները անմիջապէս կամ կարճ ժամանակահատուածի մէջ կը պատասխանուին, ուրիշ ժամանակներ երկար տարիներ կը սպասենք, ինչպէս եղաւ Չաքարիայի ու Եղիսաբէթի հետ: Մեր սպասելու մէջ Աստուած Իր նպատակներն ունի: Մեր գործը Իրեն հաւատարիմ մնալն ու շարունակ աղօթելն է:

Տոն Սթորմըր



Կը հաւատա՞ք Յիսուսին

«Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուիս»: Բոլորս ալ կեանքի ընթացքին երեւի լսած ենք այս արտայայտութիւնը, կամ գուցէ անձամբ ըսած ենք: Վստահաբար կարդացած ենք այն Աստուածաշունչին մէջ: Պօղոսն ու Շիղան բանտին մէջ գտնուելով բանտապետին նայելով ըսին. «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին ու պիտի փրկուիս...»: Յովհաննէս առաքեալն ըսաւ. «Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի եւ ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ՝ կեանք չունի»: Յիսուսը Նիկողդէմոսին ըսաւ. «Ան որ Որդոյն կը հաւատայ, յաիտեմական կեանք ունի»:

Սակայն ի՞նչ կը նշանակէ Տէր Յիսուսին հաւատալ: Արդեօ՞ք այն հետեւեալ նշանակութիւններէն մէկն է.

- Հաւատալ, որ Ան գոյութիւն ունի:
- Հաւատալ, որ Ան աշխարհը փոխեց:
- Հաւատալ, որ Ան մարգարէ մըն է:
- Հաւատալ, որ Ան մահացաւ:

Արդեօ՞ք նոյն նշանակութիւնը պիտի ունենար, եթէ հետեւեալները հարցնելու ըլլայինք.

- Կը հաւատա՞ք Կադանդ պապային:
- Կը հաւատա՞ք այլմոլորակայիններուն:

Հարցը աւելի ճշգրիտ կերպով կարելի է այսպէս ձեւակերպել.

Կը հաւատա՞ք Յիսուս Քրիստոսին այնպէս ինչպէս Աստուածաշունչը զինք կը ներկայացնէ: Ձեր փրկութեան հարցը Իրեն եւ մի միայն Իրեն վստահա՞ծ եք:

Որպէս մարդկային արարածներ, իւրաքանչիւրս իր սեփական աշխարհայեացքը ունի կեանքի, ֆինանսներու, հաւատալիքներու, քաղաքականութեան, պատմութեան, փոխյարաբերութիւններու եւ այլ բաներու շուրջ: Իհարկէ մենք մեր սեփական կարծիքն ունինք նաեւ հոգեւոր

հարցերու վերաբերեալ: Բոլորս ալ այդ համոզմունքները ունինք՝ անկախ թէ աստուածավախ ենք թէ՛ անաստուած: Հոգեւոր բաներու շուրջ մեր համոզմունքները մեր մէջ կրնան գոյացած ըլլալ տարբեր ձեւերով: Գուցէ ատոնք մեր մէջ սերմանուած են փոքր տարիքէն, երբ մեր ծնողները, մեծ հայրերն ու մայրերը եւ ազգականները մեզ փորձած են ճիշտ ճամբու մէջ կրթել: Ատոնք նաեւ կրնան գոյացած ըլլալ դպրոցի, ընկերական շրջապատի, կարդացած գիրքերու, դիտած հեռուստայադորդումներու եւ այլնի միջոցով: Կեանքի ընթացքին, այս բոլոր աղբիւրները միասնաբար գործեցին եւ մեր մէջ կերտեցին հոգեւոր հարցերու շուրջ մեր սեփական հաւատալիքները:

Սակայն օր մը դէմ առ դէմ հանդիպեցանք «Ճշմարտութեան» հետ՝ Յիսուսի հետ: Այդ պահին հասկեցանք, որ հոգեւոր հարցերու շուրջ մեր ունեցած աշխարհայեացքը ամբողջութեամբ ճշմարիտ չէր: Ըստ էութեան ատոնցմէ որոշը առասպել էր, հեքիաթ, որոշ՝ մասամբ ճիշտ էր, սակայն գերակշռող մասը մարդկային փիլիսոփայութիւն ու սխալ կարծիքներ էր: Հետեւաբար, կը գիտակցինք, որ Յիսուսը ճշմարտութիւնն է, միակ ճշմարտութիւնը: Ուստի, գիտակցուած որոշում կը կայացնենք, որ այսուհետեւ պիտի Յիսուսին հաւատամ՝ միակ ճշմարտութեանը: Այլեւս չենք շարունակէր հաւատալ այն ամէնուն, ինչ հաւատացած էինք նախկինին: Այլևս չենք հաւատար այն ամէնին ինչ մեր մէջ զարգացած էր եւ մեր մէջ դրսեւորած էր հոգեւոր հարցերու շուրջ մեր սեփական աշխարհայեացքը, քանի որ հիմա կը ճանչնանք ճշմարտութիւնը:

Արդեօք գիտէ՞ք թէ ինչ կը պատահի այն անձին հետ, երբ ան կը հաւատայ Յիսուսին. ապաշխարութիւն տեղի կ'ունենայ: Այո՛, անձը կ'ապաշխարէ, քանի որ այլեւս չի հաւատար այն ամէնին ինչ նախկինին հաւատացած էր: Ան իր նախկին հաւատալիքներէն հրաժարեցաւ եւ Յիսուսին ընդունեց որպէս ճշմարտութիւն: Սա է ապաշխարութիւնը:

- Այսպիսով, դուք կը հաւատա՞ք Յիսուսին:
- Կը հաւատա՞ք, ու Յիսուսն Աստուած է՝ մարդկային մարմնի մէջ (Յովհ. 1:14):
- Կը հաւատա՞ք, որ Յիսուսը խաչի վրայ մահացաւ՝ վճարելով ձեր մեղքերու պատիժը (Ա Կորնթ. 15:3, Բ Կորնթ. 5:21), որի համար արժանի էիք Աստուծմէ յափտեանական բաժանման (Հռովմ. 6:23):

- Կը հաւատա՞ք, որ Յիսուսի՝ մարդեղացած Աստուծոյ զոհաբերութիւնը միակ բաւարարող վճարն էր ձեր մեղքերու համար (Ա Յովհ. 2:2, Յովհ. 14:6, Գործք 4:12):
- Կը հաւատա՞ք, որ ոչինչ չկայ որ դուք կրնաք ընել ձեր անձը փրկելու համար (Եփես. 2:8-9):
- Կը հաւատա՞ք այս ամէնուն:

Այնուամենայնիւ, դուք պետք է իմանաք, որ Յիսուսի մասին եղած փաստերուն հաւատալը մետաղադրամի միայն մէկ կողմն է: Աստուածաշնչային հաւատքը շատ աւելի է, քան որոշ բաներու ճշմարտացիութեանը հաւատալը: Աստուածաշնչային փրկարար հաւատքը այդ փաստերու նկատմամբ վստահութիւն ու նուիրում կ'ենթադրէ: Դուք կը վստահի՞ք, որ Յիսուսը ձեր Փրկիչն է: Կ'ապաւինի՞ք Անոր քաջարար մահուանը՝ որպէս ձեր մեղքի պարտքի ամբողջական փոխհատուցում: Կը վստահի՞ք Անոր յարութեանը որպէս երաշխիք, որ մահէն ետք դուք նոյնպէս յարութիւն պիտի առնէք՝ Անոր հետ յաւիտեան ապրելու համար, թէ՞ այս բաներուն հաւատալուն հետ մէկտեղ փրկութեանդ համար ուրիշ բաներու նոյնպէս կ'ապաւինիս:

Եթէ հասկնաք եւ հաւատաք թէ Աստուածաշունչը Յիսուսի մասին ինչ կը սորվեցնէ, եւ եթէ վստահիք այդ ճշմարտութիւններուն որպէս փրկութեան հիմք՝ ապա դուք կը փրկուիք: Այդպէս ընելով դուք Յիսուսին հաւատացած կ'ըլլաք, այնպէս ինչպէս Աստուածաշունչը կը գործածէ «Յիսուսին հաւատալ» արտայայտութիւնը: Այնուամենայնիւ, եթէ մինչ օրս Յիսուսին չէք վստահած որպէս Փրկիչ եւ կը փափաքիք վստահիլ Իրեն փրկութեան համար, ապա ձեր բառերով պետք է Իրեն ըսէք այդ ամէնը. Աստուածաշունչը յստակ կ'ընէ, որ, եթէ անձը իր սրբտիւն մէջ հաւատայ եւ բերանով դաւանէ պիտի փրկուի (Հռովմ. 10:9-10):

Հովիւ՝ Բաֆֆի Չափարեան



Աւետարանը հասցնել կարիքաւորներուն

Հայաստանի կարիքաւորներուն Աւետարանը հասցնելու գործը մերը չէ, այլ Աստուծոյնն է: Հարուստներ եւ զբօսաշրջիկներ Հայաստանի միայն լաւ կողմը կը տեսնեն: Յաճախ մեզի կը հարցնեն թէ արդեօ՞ք Հայաստանի մէջ աղքատներ կան: Մարդասիրական կազմակերպութեան մը հրապարակած տուեալներու համաձայն Հայաստանի կարիքաւորներու վիճակը իսկապէս անտանելի է յատկապէս ծմռան ամիսներուն, երբ ջերմաստիճանը -30 նուազ է, եւ ամռանը՝ +40, իսկ անոնք ծմեռուայ ցուրտէն ու ամառուայ տաքէն պաշտպանուելու գրեթէ ոչ մէկ միջոց չունին:

ՍԱԿ-ի վիճակագրութեան համաձայն Հայաստանի բնակչութեան 30%-ը աղքատ է: Անցած 19 տարիներուն մէջ տեսած են մարդիկ, որոնք ցուրտի պատճառաւ մահացած են, երեխաներ անօթութենէ տառապած են, հիւանդներ իրենց հիւանդութեան մէջ մնացած են դեղորայք չունենալու պատճառով, մեծահասակներ միայնակ թողուած են խնամող չունենալու պատճառով...:

Տարիներու ընթացքին ականատես եղանք այսպիսի ծանր պարագաներու:

Ֆիզիկական կարիքը ծանր է, սակայն կայ նաեւ հոգեւոր սովը:

- Ի՞նչ պէտք է ընեն յաւիտենական կեանքն ունենալու համար:
- Ո՞վ զիս պիտի փրկէ իմ մեղքերէս:
- Հոգիս ո՞ր կրնայ խաղաղութիւն գտնել:

Այս հարցերը ցերեկ ու գիշեր մեզի կը հալածեն: ԱՍՄ-ի խումբը իր լաւագոյնը կ'ընէ ոչ միայն աջակցելու, հագցնելու, կերակրելու եւ առողջական հարցերը հոգալու մէջ, այլ նաեւ Հայաստանի երեխաներուն, պատանիներուն, ամուսնացած զոյգերուն եւ մեծահասակներուն Աւետարանը հասցնելու մէջ:

Ամէն անգամ երբ կ'այցելենք հայրենիք շատեր կուգան Տէրոջը մօտ, կուգան Աւետարանը լսելու, քաջալերուելու եւ օրհնուելու:

Շատ քաջալերական էր հովիւ՝ Բաֆֆի Չափարեանի գլխաւորած, ԱՄՆ-էն Հայաստան մեկնած ԱՄՄ-ի միսիոնարական խումբի վկայութիւնները: Իրենց ծառայութեան միջոցով շատեր իրենց կեանքը Տէրոջը յանձնեցին եւ խումբը իսկապէս օրհնութեան պատճառ դարձաւ շատերու համար:

Ձեր աղօթքները ԱՄՄ-ի համար կենսական են. աղօթեցէ՛ք Աւստրալիոյ, ԱՄՆ-ի եւ Հայաստանի մէջ եղող մեր առաջնորդներուն համար:

Ձեր նիւթական աջակցութիւնը նոյնպէս գնահատելի է. մինչ գործը կը տարածուի եւ նոր կարիքաւոր ընտանիքներ կը յայտնուին մեր առջեւ:

Ձեր նուիրատուութիւնները 100%-ով կ'ուղղորդուին կարիքաւոր մարդկանց կարիքները հոգալու համար: Մեր բոլոր ծառայութիւնները կամաւորներու միջոցով կը կատարուին:

Թերեւս փափաքիք միանալ մեր յաջորդ միսիոնարական ճամբորդութեանը եւ ականատես ըլլալ թէ Տէրը ինչեր կ'ընէ Հայաստանի մէջ:

Շնորհակալ եմ բոլոր անոնց որոնք օգնեցին մեզ անցեալին մէջ եւ կը շարունակեն մեզի համար աղօթել:

Աստուած օրհնէ ձեզ,

ԱՄՄ-ի յանձնախումբ